Ա.ՓԱՓԱԶՅԱՆԱՆ, Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Լոս-Անջելես, Թեքեյան մշակութային միության հրատ., 1996, 98 էջ

Գիրքը կազմված է Հ. Պողոսյանի «Եղեռնին նվիրված արժեքավոր հատոր մը» խոսքից, առաջաբանից և վեց գլուխներից: Տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե ամբողջական մենագրության, այլ հեղինակի՝ տարբեր ժամանակներում գրած հոդվածների ու հավաքած նյութերի մասին:

Առանձնակի ուշադրության արժանի է առաջին գլուխը «Արևմտահայության վիճակը ըստ օսմանյան սուլթանական ֆերմանների (16-18-րդ դդ.)» որում գիտական շրջանառության մեջ են դրված թուրքական պաշտոնական մի շարք վավերագրեր:

Օսմանյան կայսրությունում հայ համայնքի պատրիարքությունը հատուկ հրովարտակով հաստատվել է 1461 թ., այսինքն Կ.Պոլիսը գրավելուց մի քանի տարի անց, չնայած, նշում է Ա.Փափազյանը, այդ քաղաքում հայկական հոգևոր առաջնորդություն եղել է մինչև այդ էլ, 14-րդ դարի կեսերից սկսած:

Հեղինակը օգտագործել է ոչ միայն Ստամբուլի «Մինիստրների խորհրդի» և «Թոփկաբու պալատի» արխիվների նյութերը, այլև «Քեամիլ Քեբեջիի անձնական հավաքածուի» համապատասխան նյութեր:

«Միլլեթ» համակարգին վերաբերող նյութերը հեղինակին հիմք են տալիս եզրահանգելու, որ համայնքների կողմից ընտրված կրոնական առաջնորդները «հաստատվում էին կայսրական հատուկ բարաթով», որում վերահաստատվում էին նախորդ սուլթանների կողմից տրված հրամանները և ապա նշվում հա-

ամայնքի կրոնական առաջնորդի իրավասությունները ու պարտականու-թյունները, ելնելով շարիաթի օրենքներով սահմանված նորմերից (էջ 2):

Հայ պատրիարքը սուլթանի կողմից հաստատվելու համար պար-տավոր էր մուծել 100 հազար ակչե (թուրքական արծաթյա դրամ), նաև հայ համայնքից հավաքել «Միրի մուկաթաա» հարկը (100-140 հազար ակչե) և հանձնել կառավարությանը: Այս կարգը թելադրում էր սուլթա-նին հաճախակի փոխել պատրիարքներին: Առաջին պատրիարքի Հռ-ոմկլակիմ եպիսկոպոսից հետո մինչև 1848 թ. պատրիարքական աթոռին նստել է 82 մարդ:

Թուրք պատմաբան Ահմեդ Բեքիկի «Ստամբուլի 16-րդ դարի կյան-քը» վավերագրերի ժողովածուի նյութերը վկայում են, որ դեռ Սելիմ I-ի ժամանակ Կ.Պոլիսի հայկական շատ եկեղեցիներ քանդվել են, իսկ մյուսներ եկեղեցիներ վերածվել են մզկիթների: Թուրք աղբյուրները նաև տեղեկություններ են պարունակում հայերի հանդեպ թուրքերի վայրա-գությունների մասին: Էրզրումի մասին թուրք ժամանակագիրներից մե-կը տեղեկացնում է, որ շատ եկեղեցիներ վերածվեցին մզկիթի, «մյուս-ները քանդեցին» (էջ 4): Է.Չերպին (17-րդ դար) գրում է. «Կարսում գտնվող «Սուլեյման Էֆենդի» մզկիթը... շքեղ արտաքինով լավ սրբա-վայր է: Այն քրիստոնեական եկեղեցի է եղել և ձևափոխվել է մզկիթի: «Հուսեյն Քեդխուդա» մզկիթը նախապես եղել է քրիստոնեական հոյա-կապ մի տաճար, որը կոչվել է «Կարմիր եկեղեցի», սակայն սուլթանա-կան հրամանագրով այն ևս ձևափոխվել է մզկիթի» (էջ 4):

Առանց կայսերական դիվանի թույլտվության արգելված էր ոչ միայն նոր եկեղեցի կառուցել, այլև հները վերակառուցել կամ վերանորոգել: Իսկ թույլտվություն տրվում էր մեծ դժվարությամբ և այն ստանալուց հետո էլ հարցը մնում էր անկախ: Թուրքական մի աղբյուր վկայում է. «1720թ. Թուրքիայում Քառասուն մանկանց եկեղեցին ընդարձակելու համար, երբ կառավարությունից թույլտվություն է ձեռք բերվում, մահ-մեդական բնակչությունը գազազելով... հարձակվում է, եկեղեցին քան-դում, իսկ վանքն էլ այրում» (էջ 5): Այս հարցում թուրք աղբյուրների հի-շատակումները հաստատվում են հայ պատմիչների բազմաթիվ վկա-յություններով:

Թուրք իշխանությունների քրիստոնյաների նկատմամբ վերաբեր-մունքը թելադրվում էր շարիաթի հռչակած սկզբունքներով, ըստ որոնց մասնավորապես, քրիստոնյան իրավունք չուներ մահմեդական թաղե-

ղում բնակություն հաստատել: 1809թ. մեծ վեզիր Եուսաֆ Զիա փաշան, երբ իմանում է, որ Թուրքիայում մահմեդական տներում հայ վարձակալներ են բնակվում, հրամայում է նրանց անմիջապես քշել մահմեդական թաղերից: Այս իրողությունը 1872թ. օրենքի պահանջ դարձավ սուլթան Աբդուլ Ազիզի արձակած հրամանով. ի դեպ քրիստոնյայի բնակարանի չափսերը սահմանված էին ավելի փոքր, քան մահմեդականներինն էր (թուրք տարեգիր Շանի Զադեն այդ մասին ուղղակի վկայություն ունի): Թույլատրվում էր քրիստոնյաների մահմեդականացում, այն կրում էր պետական քաղաքականության բնույթ, և դրա իրականացման համար գործադրվում էին հարկադրանքի թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական միջոցներ:

Խստագույնս պատժվում (ընդհուպ մահապատիժ) էր նա, ով փորձում էր վերադառնալ իր նախկին կրոնին: Զանգվածային մահմեդականացման բնութագրական օրինակ է համշենահայության կրոնափոխությունը:

Քրիստոնյաների համար սահմանափակումներ կային կյանքի բոլոր ասպարեզներում՝ կենցաղում արգելվում էին հարսանիք ու թաղում առանց թույլտվության կատարելը, մահմեդականի նման հագնվելը և այլն): Զանցանք թույլ տրված հայից երկու անգամ ավելի շատ տուգանք էր գանձվում, քան մահմեդականից:

Թուրք պատմաբան Թ.Ուզունչարչլիի փաստաթղթերի երկու հատորանոց գրքում հարուստ նյութ կա մանկահավաքության մասին: Մանկահավաքը կատարվում էր սուլթանի հրամանով: Հավաքվում էին 8-20 տարեկան ֆիզիկապես առողջ տղաները: Նրանց անունը փոխում էին, մահմեդականացնում, թլպատում և զորանոցային հատուկ պայմաններում դաստիարակում մոլեռանդ մահմեդական ոգով ու դարձնում ենիչերի:

«Ժամանակի իշխանները, - գրում է 16-րդ դ. թուրք պատմաբան Մ.Սելանիկը,-տղաների տևշիրճեի (մանկաժողով) գործում անխիղճ են եղել և նվերի անվան տակ շատ մեծ կաշառքներ են վերցրել, ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ագահորեն հարձակվում են երկրի ռայաների վրա: Հարուստ ռայաներից խլել են անթիվ անհամար հարստություն, իսկ աղքատ ռայաներից՝ նրանց զավակներին, քանդել են նրանց տունն ու տեղը» (էջ 12): Ռայան խեղդվում էր հարկերի ծանր բեռի տակ և այլ ելք չգտնելով ձեռքն էր առնում պանդուխտի ցուպը: Հարկերն այնքան ծանր էին, դրանք հավաքելու ե-

դանակները այնքան բարբարոս, որ նույնիսկ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներից ոմանք դիմում էին սուլթանին վիճակը փոխելու առաջարկներով: Նրանցից մեկը Մուստաֆա 2-րդը սուլթանին գրում է.

«... ռայայի վրայից անհրաժեշտ է վերացնել անտեղի հավաքվող հարկերը, քանի որ ռայայի վիճակն առանց այդ էլ ծանր է»: (էջ 13): Լայն տարածում ուներ ստրկավաճառությունը: Է.Չելեբիի տվյալներով միայն Կ.Պոլսում ստրկավաճառությամբ զբաղվում էին 2000 առևտրական: Քաղաքի Եսիր բազարում վաճառվում էին նաև մեծ թվով հայեր:

17-րդ դարի թուրք պատմիչ Կուլի բեյը քննադատության է ենթարկում ռայաների նկատմամբ օսմանյան դաժան քաղաքականությունը:

Գրքի երկրորդ գլուխը վերնագրված է «Հայերի կոտորածները Աբդուլ Համիդի բռնատիրության շրջանում»: Բեռլինի վեհաժողովից հետո հայերի վիճակն էլ ավելի ծանրացավ: Ճիշտ է, թուրք պատմագրությունը վերջին տարիներին մեծ ջանքեր է թափում սուլթան Աբդուլ Համիդ II-ին «իմաստության և արդարամտության» շղարշով պատելու ուղղությամբ (այս ուղղությամբ հատկապես եռանդուն է գործում թուրք պատմաբան Զահուրի Դանիշմանը), այնուամենայնիվ այդ սուլթանը մնում է պատմության հայտնի ամենաարյունարբու գործիչներից մեկը, որի այդ արյունատենչության քավության նոխազ դարձան հայերը: Ահա նրա և նրա ժամանակակիցների՝ կարգախոսի նշանակություն ունեցող արտահայտություններից մի քանիսը. «Ես կնախընտրեմ մեռնել, քան թե Անատոլիայի արևելքում ինքնավարության տանող բարեփոխումներ մտցնել (Աբդուլ Համիդ II): «Հայ ազգը վերացնելու, անհետ և անճիտ ընելու ենք» (Մեծ վեզիր Քեամիլ փաշա): «Հայկական հարցը վերացնելու համար հարկ է բնաջնջել հայ ազգը» (Մեծ վեզիր Սաիդ փաշա): Ի դեպ՝ ահա թե այդ մարդատյացը ինչ է գրում Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած «Համիդիե» քրդական հեծելագնդերի մասին. «Համիդիե հեծելագնդերը տուրքերից ազատված լինելով հանդերձ, իրենց շահերի համար բռնություններ են գործադրում բնակչության վրա: Թե վիլայեթի /վարչության/ և թե բնակչության բողոքներից պարզվում է, որ Դիարբեքիրի շրջանում գտնվող «Համիդիե» հեծելագնդի հրամանատար Մուստաֆա փաշան, որը նաև աշիրեթի առաջնորդն է, աշիրեթի զինված մարդկանց, բառիս բուն իմաստով, դարձրել է բռնություն գործադրելու կատարյալ գործիք, վտանգելով շրջանի բնակչության անվտանգությունն ու անդորրը: ... Հայերի աղետից հետո Անատոլիայի դրությունը բավականին բարդ է, և եթե քրդերը իրենց այս տեղաշարժերով բնակ-

ջության ունեցվածքին ու անասունների հանդեպ նոր բռնություններ գործադրեն, ինչն ավելի հավանական է, դա առաջ կբերի մի նոր աղետ»:

Հայերի զանգվածային կոտորածների իրողությունը եվրոպական մամուլում խեղաթյուրելու կամ ընդհանրապես հերքելու նպատակով Քեամիլ փաշան սուլթանին խորհուրդ էր տալիս դրամի ուժով եվրոպական մամուլում համապատասխան հոդվածներ տպագրել: Աբդուլ Համիդը հետևեց նրա խորհուրդներին, սակայն եվրոպական հասարակայնությանը խաբել չհաջողվեց: Սասունում և կայսրության հայաբնակ մյուս շրջաններում հայերի զանգվածային ջարդերը միջազգային բուռն արձագանք ունեցան, ինչը և հարկադրեց սուլթանին ընդունելու Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու ծրագիրը: Սակայն այդ լոկ խորամանկ քայլ էր և, ինչպես նշում է Օսման Նարին՝ «բարենորոգումների մասին Աբդուլ Համիդի խոստումները կեղծ էին, «բարենորոգում» բառը վրդովում էր նրան և գրգռում նրա ոճրային բնազդները» (էջ 21):

Նույն կարծիքին էր նաև Քեամիլ փաշան: Բարենորոգումների ծրագիրը «ընթերցելու ընթացքում, - գրում է նա, - ես նկատել էի, որ այդ հոդվածները հազիվ թե գործադրվեին կյանքում, քանի որ քրդերի զինաթափումը և քրիստոնյա պաշտոնյաների նշանակումը ծանր է նստելու քրդերի վրա»: Իսկ Արևմտյան Հայաստանում ամենուրեք արյուն էր հեղվում: «Ջարդը, - գրում է Օ.Նարին, - շարունակվում էր սոսկալի չափերով: Քաղաքացիական ու զինվորական իշխանությունների հրամաններով քրդերը հարձակվել էին գյուղերի վրա, բայց ետ էին մղվել, որից հետո զինվորական ուժեր ուղարկելու անհրաժեշտություն էր առաջացել: Այդ ժամանակ զինվորներն այրել են գյուղերը և կոտորել բազմաթիվ մարդկանց»: Քեամիլ փաշան պարզորոշ ակնարկում է, որ Սասունի կոտորածները տեղի ունեցան սուլթանի հրամանով, և այն իրականացրեց 4-րդ բանակը, Զեքի փաշայի հրամանատարությամբ:

Ահա թե ինչ է գրում Սայիդ փաշան Բաբ Ալիի (Կ.Պոլիս, 1895թ. սեպտեմբեր) ցույցի մասին. «Սուլթանը զորք դուրս չբերեց հայերի ցույցը խափանելու համար, նա կարող էր ցույցը կանխել, բայց միտումնավոր այդ չարեց, որպեսզի զինված թուրք ամբոխը հայերին հաշվեհարդարի ենթարկեր»: Իսկ ամբոխը, մասնավորապես կրոնական դպրոցների սաները՝ սոֆթաները, զինվել էին նույն սուլթանի հրամանով: Հայերի ջարդարարների շարքերում եղել են նաև ծպտված զինվորականներ: Սայիդ

մփաշան ուղղակի նշում է. «բռնացողների թվում եղել են նույնիսկ զին-վորներ և ուսանողներ» (էջ 22):

1894-96թթ. կոտորածների ականատես O. Նարին գրում է. «Այս ջար-դը բոլոր պարագաներում մի ահավոր եղեռն էր մարդկության դեմ: Իսկ այդ եղեռնի պատճառը հանդիսացողը, անկասկած, նույն Աբդուլ Հա-միդն էր» (էջ 23):

Թուրք մի այլ պատմաբան (նույնպես իրադարձությունների ժամա-նակակից ու ականատես) Սաղըկ Շահիդը գրում է. «Հայերի վերջին կո-տորածը նույնպես մտածված էր, ծրագրված ու կարգադրված սուլթա-նի կողմից»: (էջ 23):

Հեղինակն իրավացի քննադատության է ենթարկում նշված իրա-դարձությունների պատճառների նենգափոխման ճիգերը երիտթուրք Ջեմալ փաշայի, ինչպես նաև ժամանակակից թուրք շատ պատմաբան-ների կողմից: Արդարացի է նաև Մանդելշտամի հասցեին նրա քննադա-տական խոսքը: Բանն այն է, որ Ա. Մանդելշտամը այն միտքն էր առաջ քաշում, թե մինչև 19-րդ դարը հայերը Օսմանյան կայսրությունում ապ-րել են բարվոք ու խաղաղ: Դրությունը, ըստ նրա, ի վնաս հայերի ար-մատական փոփոխության ենթարկվեց կայսրության գործերին Ռու-սաստանի միջամտությունից հետո: Սակայն Մանդելշտամին քննադա-տելուց անմիջապես հետո Ա.Փափազյանը տուրք է տալիս նմանատիպ տեսակետների: Նա գրում է. «Բեռլինի վեհաժողովից հետո, երբ հայկա-կան հարցը դարձավ միջազգային բնույթի և Մեծ պետությունների դի-վանագիտության շահարկման առարկա, Օսմանյան կայսրության քա-ղաքականությունը հայերի հանդեպ շեշտակի փոխվեց: Եվ որպեսզի մի երկրորդ Բուլղարիա չստեղծվի Թուրքիայի արևելյան հայկական նա-հանգներում (այսինքն, որպեսզի այդ նահանգների համար Ռուսաստա-նը պատերազմի մեջ չմտնի Օսմանյան կայսրության հետ - Ս.Պ.), ծրագրվում է... ջարդերի միջոցով ոչնչացնել հայ ժողովրդին և դրանով մեկընդմիշտ ասպարեզից վերացնել Հայկական հարցը»:

Հայերի բնաջնջման օսմանյան քաղաքականության գլխավոր պատճառը փնտրել այդ կայսրության սահմաններից, օսմանյան նպա-տակադրումներից դուրս, լուրջ սխալ է: Ռուսաստանը միջամտեր, թե չմիջամտեր Օսմանյան կայսրության ներքին գործերին, հովանավորեր թե չհովանավորեր հայերին, Հայկական հարցը միջազգային դառնար թե ոչ, միևնույնն է, թուրքերը արևմտահայերին ոչնչացնելու էին: Հարցը միանգամայն այլ երկընտրանք ուներ՝ ո՞ւմ հայրենիքն է լինելու

Արևմտյան Հայաստանը՝ հայի՞, թե՞ թուրքի:

Գրքի 3-րդ՝ «Իրավիճակը Մեծ եղեռնի նախօրյակին և հետո» գլխում թռուցիկ ներկայացվում է Մեծ եղեռնի նախապատրաստության ուղղությամբ Օսմանյան իշխանությունների և երիտթուրք կուսակցության իրականացրած միջոցառումները, և արևմտահայ գործիչների կեցվածքը ահագնացող վտանգի առջև:

Հայոց պատրիարքարանը մի շարք անգամներ, մասնավորապես՝ 1911 և 1913 թվերին, Բ.Դռանը մանրամասն տեղեկագիր ուղարկեց, ցույց տալով, որ կայսրությունում գործնականում ընթացքի մեջ է հայերի բնաջնջման քաղաքականությունը: Հեղինակն անդրադառնում է Իթթիհադի 1910 և 1911թթ. ներկայացուցչական ժողովների այլամերժ որոշումներին, թուրքական պաշտոնական քաղաքականության մեջ օսմանիզմից պանիսլամիզմին, իսկ վերջինից պանթուրքիզմին և պանթուրանիզմին անցման պարագային:

Երիտթուրք գործիչ Ջելալ Նուրին արտահայտելով իր կառավարությունում տիրապետող կարծիքը, գրեց. «բոլոր դեպքերում հայերի հարցը կարելի է շտապ լուծել՝ բոլորին կոտորելով...»:

Հաջորդ գլուխը վերնագրված է «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի»:

Նշվում է, որ երիտթուրքերի լիդերների դատավարությունը արդյունք էր ոչ թե թուրքական որոշակի հասարակական-քաղաքական ուժերի գործունեության բարոյական մղումների, այլ հետապնդում էր մի գլխավոր նպատակ՝ հայերի հանդեպ կայացված վայրագությունների ամբողջ մեղքը բարդելով երիտթուրքերի և, առանձնապես, նրանց լիդերների վրա չքմեղացնել թուրք մյուս հասարակական ուժերին, թուրքական պետությանը: Այս գիծը կարմիր թելի նման անցնում է բոլոր դատավարությունների արձանագրություններով: Ակնհայտորեն այն տպավորությունն է ստեղծվում, որ մի անտեսանելի ձեռք համառորեն կատարվածի պատասխանատվությունը թուրքական իշխանություններից, մանավանդ կառավարության վրայից շուռ է տալիս երիտթուրքական գաղտնի Կենտկոմի և այդ կուսակցության տեղական մարմինների ղեկավարների վրա, չնայած այն բանին, որ ցեղասպանության տարիներին օսմանյան կառավարությունը, փաստորեն, միակուսակցական երիտթուրքական էր և նրանում անվերապահ գերիշխանություն ուներ Թալեաթ-Էնվեր-Ջեմալ եռյակը: Նպատակը պարզ էր՝ միջազգային հանրության առջև թեթևացնել պարտված Թուրքիայի վիճակը, նվազագույ-

րի հասցնել հանցագործության համար ենթադրվող պատժամիջոցնե-րը: Որովհետև մի բան էր, երբ վեհաժողովներում ցեղասպանությունը ներկայացվեր որպես Թուրքիայի պետական քաղաքականություն և միանգամայն այլ էր, երբ այն դիտվում էր որպես մի կուսակցության ու նրա լիդերների հանցագործություն, այն էլ այնպիսի կուսակցության, ո-րը ոչ միայն այլևս իշխանության ղեկի մոտ չէ, այլև պաշտոնապես լու-ծարված է ու այլևս գոյություն չունի, իսկ հանցագործության հրահրող-ներն ու կազմակերպիչներն էլ թուրքական դատարանի կողմից դատա-պարտվել են:

Ուշագրավ է գրքի հաջորդ «Ճշմարտությունը հայկական ցեղաս-պանության մասին» գլուխը: Հեղինակը տարիներ շարունակ հավաքել է աշխարհի տարբեր պետական, քաղաքական, կրոնական գործիչների, աշխարհահռչակ մտավորականների, գիտնականների, եղեռնի ակա-նատեսների ասույթները (թվով 114 հեղինակ) և ներկայացրել ընթերցո-ղին: Այս ցուցակում են Ֆ.Բրայսն ու Ուլ.Գլաստոնը, Վիկտոր Հյուգոն և Վ.Վիլսոնը, Ժ.Դիլոնն ու Ժ.Բեռնշտայնը, Ժ.Ժորեսն ու Յու.Վեսելովսկին, Օ.Կայդանովան, Մ.Մակքոլը, Է.Դյումերկը և Հ.Մորգենթաուն, Յոհ.Լեփ-սիուսը և Ժ.Մորգանը, Մ.Հտպագեն և Գ.Շտյուրմերը, Ե.Մարքվարտը և Ա.Թոյնբին, Վանգենհայմը և Շ.Ռիխտերը, Ա.Մեյեն և Բ Էքարդը, Կ.Լիբկ-նեխտը և Ֆ.Նանսենը, Լ.Ջորջն ու Ու.Չերչիլը, Հ.Գիպենսը և Հ.Քյարբյուխ-ները, Ա.Բարբին և Ռ.Պինոն, Ա.Բրանսը և Մ.Էրցբերգերը, Ա.Մանդելշտա-մը և Գուլցը, Ա.Վեգները և Մ.Յագոբսոնը, Է.Վերները և Ֆ.Դուսեյնը, Մ.Զա-մալզադեն և Ե.Ռայնիսը, Վ.Բրյուսովը և Վ.Գորդլևսկին, Վ.Տարլեն և Վ.Կո-լարովը, Մ.Գորկին և Գ.Օրջոնիկիձեն, Ս.Կիրովը և Բ.Գեմբարսկին, Լ.Արագոնը և Խեյրի Համան, Ք.Մազիար Աիմեդը և Շ.Հովոբան, Օ.Զագո-րովը և Դ.Բալաբանովը, Է.Մեժելայտիսը և Ք.Ուոքերը, Մ. Խարալապիդի-սը և Դ.Մ.Լանգը, Ժ.Մարշեն և Ջ.Կարտերը, Ջ.Բուշը և Ջ.Դուգլասը, Օսմ.Նուրին և Մ.Քեամիլ փաշան, Սայիդ և Դամադքերիդ փաշաները, Ջ.Նուրին և Ս.Թալեաթը, Քեմալ Փաշան, Մ. Ռիֆաթ, Ս. Հեդիմ և Ֆ.Աթայ, Հալիմ և Ջելալ բեյերը, Ա.Քեմալը և Մուստ. Քեմալը (Աթաթուրք), Ն.Հիք-մեթը, Ֆ.Էրդեն և ուրիշներ:

Գրքի վերջին գլուխը կրում է «Մեծ եղեռնի հիշատակումը աշխարհի տարբեր երկրների խորհրդարաններում» խորագիրը:

Մեծ եղեռնի 50-ամյակը Հայոց ցեղասպանությունը դուրս բերեց մի-ջազգային ճանաչման մայրուղի: 1965-ին այն ճանաչեց խաղաղության կողմնակիցների Հելսինկիի համաշխարհային կոնգրեսը:

Հաջորդ տարիներին հայոց ցեղասպանության հարցը բազմիցս քննարկվեց ՄԱԿ-ի համապատասխան հանձնաժողովներում: 1987-ին այն ճանաչեց Եվրախորհուրդը: 1988թ. Հայոց ցեղասպանության մասին որոշում ընդունեց Հայաստանի Գերագույն խորհուրդը: Այն աշխարհի ամենատարբեր երկրների խորհրդարանների քննարկման նյութ դարձավ: Հեղինակը բերում է այդ քննարկումների ընթացքում պետական գործիչների՝ Թ.Օզալի, Ն.Կանտեմերի, Թ.Չիլլերի, Բիլ-Քլինտոնի, Հ.Կիլմերի, է.Քենեդիի, Ռ.Դոլի, Ռ.Լեհմանի, է.Կալեկլիի, Բ.Բոքսերի, Զ.Պեսերրուի, Վ.Բոնիերի, Մ.Քուոմոի, Մ.Նույկինի, Ա.Ռուցկոյի և այլոց արտասանած ճառերից քաղվածքներ: Նշվում է նաև, որ 1994թ. ապրիլի 22-ին Հայոց ցեղասպանության մասին հայտարարությամբ հանդես եկավ Ռուսաստանի դաշնության պետական դուման:

Վ.ՍՎԱՋԼՅԱՆ, Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ. Երևան, «Գիտություն» հրատ., 1995, 407 էջ

Ուսումնասիրությունն ընդգրկում է Մեծ եղեռնից վերապրած Արևմտահայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ գավառներից տարագրված, Հայաստանում (մասամբ սփյուռքում) բնակություն հաստատած արևմտահայերից գրի առնված՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ժողովրդական բանավոր զրույցները, հուշերն ու երգերը: Իր խոսքում գրքի խմբագիր Ս.Հարությունյանը, բարձր գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը, գրում է. «... Ժողովածուն ունի հույժ պատմական արժեք ու նշանակություն... Կատարված է տքնաջան ու շնորհակալ մեծ աշխատանք հավերժ մոռացության վտանգից հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ողբերգական ու հերոսական պատմության անզուգական հուշերն ու երգերը փրկելու և անմահացնելու ուղղությամբ»:

Գրքում ներկայացված 70 հուշապատումները Մեծ